Ավետիք Իսահակյան

Ձայնը հնչում է խավարի խորքից

Ձայնը հնչում է խավարի խորքից, -
Գրքա՛, հայտնվի՛ր սո՛ւրբ ճշմարտություն.
Ես քեզ եմ փնտրել իմ կյանքի չեմքից,
Եվ տե՛ս, քարացա անհուն տանջանքում:

Բյուր ուղիներով ես դիմեցի քեզ,
Քո հետքն ու շուքը նույնիսկ չըգըտա.
Տե՛ս, սըտության մեջ, մոլորության մեջ
Ձախջախվեց կյանքըս … ու դու չե՞ս գըրքա …

Հոգնած եմ հիմա, անուժ ու հիվանդ,
Բայց հավատում եմ – ունիս գոյություն.
Բայց էլ չըմնաց մի ուղի անհայտ. –
Ա՜խ, երևացի՛ր, մեծ ճշմարտությո՛ւն …

Եվ ես ուժ կառնիմ, կըգոտեպնդվիմ,
Ցուպըս կըվերցնեմ և ճամփա կերթամ,
Լույսըդ կավետեմ խավար աշխարհին,
Մոլոր մարդկության վե՛հ կյանքըդ կուտամ …

1900
Ցյուրիխ